*ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2017, 70, № 1, 79-80*

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

## ԽԱԼԱԹՅԱՆ ԷՐԻԿ ՍՈՒՐԵՆԻ
## (1934 - 2017)



2017թ. փետրվարի 26-ին կյանքից հեռացավ ճանաչված հիդրոերկրաբան, հանքային ջրերի խոշոր գիտակ, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող, երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու ***Էրիկ Սուրենի Խալաթյանը***:

Է.Խալաթյանը ծնվել է 1934թ. հունիսի 9-ին, Երևանում, ծառայողի ընտանիքում: 1957թ., ավարտելով ԵՊՀ Երկրաբանական ֆակուլտետը, նա մինչև իր կյանքի վերջը, շուրջ 57 տարի, անընդմեջ աշխատելով Հայաստանի ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում, իր գիտական գործունեությունը անմնացորդ նվիրաբերել է հիդրոերկրաբանական և հիդրոերկրաքիմիական տարաբնույթ հարցերի ուսումնասիրման և բացահայտման գործին:

1962-65թթ. Է.Խալաթյանը սովորում է ասպիրանտուրայում, հայազգի անվանի գիտնական, ԽՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Ն.Ի.Խիտարովի ղեկավարությամբ: 1971թ. Երևանում, Պետական համալսարանի գիտական խորհրդում հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը «Բորի բաշխման օրինաչափությունները Հայկական ՍՍՀ հանքային ջրերում» թեմայով և ստանում գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Նրա հետազոտությունների արդյունքում Հայաստանի տարածքում հայտնաբերվել և անջատվել են տարբեր հանքային ջրերի ելքերի ու հանքավայրերի տիպեր, բացահայտվել են նրանց առաջացման և կազմերի ձևավորման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, բուժիչ հատկությունները և օգտագործման ոլորտները: Քաջատեղյակ լինելով և տիրապետելով հարուստ ու արժեքավոր մատենագրական նյութերի, Է.Խալաթյանն իր աշխատություններում հաճախ անդրադարձ է կատարել Հայաստանում հայտնի հանքային ջրերի բուժիչ հատկությունների վերաբերյալ դեռ միջնադարյան նշանավոր գիտնականների դիտարկումներին: Նրա ուսումնասիրությունների արդյունքում Հայաստանի տարածքում առաջին անգամ անջատվել են ածխաթթվային հանքային ջրերի բորաբեր-հազվագյուտ ալկալամետաղային պրովինցիաները, մշակվել և առաջարկվել են նմանատիպ

հանքային ջրերից մի շարք հազվագյուտ ալկալային մետաղների՝ լիթիումի, ռուբիդիումի, ցեզիումի և տարբեր միացությունների կորզման էկոլոգիապես անվտանգ գիտատեխնոլոգիական աշխատանքների կազմակերպման հնարավորությունները:

Հատկապես արժեքավոր են Է.Ս.Խալաթյանի հետազոտությունները՝ կապված ածխաթթվային ջրերի երկրաքիմիայի, հիդրոերկրաքիմիական կանխատեսման ժամանակ ալգորիթմների դասակարգման փորձի կիրառման հետ: Բացի այդ, նա, Լայպցիգի Միջուկային հետազոտությունների ինստիտուտի աշխատակիցների հետ համատեղ, կատարել է նաև Հայաստանի հանքային ջրերի հիմնական հանքավայրերի ջրերի համալիր իզոտոպային հետազոտություններ: Շնորհիվ այս հետազոտությունների, ածխաթթվային թերմերի և սառը ջրերի ծագումնաբանությունն ի ցույց դրվեց նոր լույսի ներքո:

Գիտահետազոտական գործունեությունը Է.Ս.Խալաթյանը հաջողությամբ և սիրով համատեղում էր մանկավարժական գործունեության հետ, դասավանդելով ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետում, ինչպես նաև մասնակցում էր Երևանի Ֆիզիոթերապիայի և առողջարանային բուժման գիտահետազոտական ինստիտուտի գիտական ծրագրերի իրականացմանը:

Է.Ս.Խալաթյանը մասնակցել է բազմաթիվ միջազգային և հանրապետական գիտաժողովների, իսկ 27-րդ Միջազգային երկրաբանական կոնգրեսում ներկայացվել են նրա համահեղինակությամբ կազմված ՀՍՍՀ հիդրոերկրաբանության առանձնահատկություններին նվիրված զեկույցը և կոնգրեսի ուղեցույցը:

Է.Ս.Խալաթյանը հեղինակ է հարյուրից ավելի գիտական աշխատությունների, որոնք տպագրվել են հանրապետական, համամիութենական ու միջազգային գիտական պարբերականներում, երեք մենագրությունների և բազմաթիվ ձեռագիր հաշվետվությունների: Նրա համահեղինակությամբ են կազմվել Հայաստանի Ազգային ատլասի Հիդրոերկրաբանական և Հանքային ջրերի քարտեզները, ինչպես նաև «Հայաստանի բնաշխարհի» և «Հայկական Հանրագիտարանի» համապատասխան պրակները: Է.Ս.Խալաթյանը համահեղինակությամբ ստացել է նաև 6 հեղինակային վկայագիր:

Կյանքից հեռացավ Հայաստանի հիդրոերկրաբանության ոլորտի հմուտ մասնագետ, լայն մտահորիզոնի տեր գիտնական և ազնիվ քաղաքացի, ում հիշատակը վառ կմնա նրա գործընկերների և նրան ճանաչող շատերի հիշողության մեջ:

*ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ*
*ՀՀ ԳԱԱ "Գիտություններ Երկրի մասին" տեղեկագրի խմբագրություն*